Հապա թէ կարելի լինի հակակենտրօնական նաւթեան սկզբունքների վրա հիմնել, երբ այս վերջին կազմակերպութեան ժամանակ դէպի ուրիշների այժերը և բարեմասնութիւնը պէտք է կասարեալ հաւատ ունենալ: Այս բոլորը ի նկատի ունենալով, գինուորական այդ վերաբերգութիւնը միայն թղթի վրա կը մնայ, առանց իրագործվելու, մանաւանդ որ թէ գինուորական մինիստրութեան գլխաւորը և թէ նրա օգնականները մեծ են նոյն Օսմանեան-փաշա, նոյն Ռեվիշ-փաշա և այլն, այսինքն այնպիսի անձինք, որոնք ծնուել են հին ձևի ժամանակ և որոնք ամեն տեսակ փոփոխութիւնները անկարելի գործ են համարում:

Ընդհանուր գինուորագրութեան գաղափարը թիւրքիայի համար ամենալի օտար և ամենալի անիրագործելի է: Այդ հարցի մասին իւրաքանչիւր թիւրք շատ որոշ է խօսում: Ընդհանուր գինուորագրութիւնը ատելի է թէ թիւրքերի և թէ քրիստոնեաների համար: Քրիստոնեաներին Մահմեդի զօրքերի կարգում կանգնեցնելը բոլորովին հակառակ է Թիւրքիայի պետական և կրօնական կազմակերպութեանը: Թիւրքաց զօրքերի կրօնական բնկղմունքների վրա հիմնած կազմակերպութեան ոյժը կը խոչընդոտէ այս տուրի պատճառով: Կրօնական բաժանումն, ամենութիւն և արհամարհանք, փոխադարձ անհաւատարմութիւն, այս բոլորը կը սպրդին թիւրքաց զօրքերի մէջ: Քրիստոնեայ ժողովուրդները, որոնք զարերով տարակիսներ են ենթել, կորցրել են գինուորին հարկաւոր բարոյական յատկութիւնները, գինուորական ոգին: Անհնազանդ այդ քրիստոնեաների գինուորական ոգին և տաղանդը կարելի է նորից զարթեցնել, բայց զարթեցնող ոյժը երբէք չէ կարող լինել կիսալուսնի դրօշակը, այն դրօշակը, որ զարերով աշխատել է ոչնչացնել այդ ոգին, որ զարերով ձգտել է քրիստոնեաներին ըստ ամենայնի զրկել: Այդպես են մտածում իրանք թիւրքերը քրիստոնեաների գինուորական ծառայութեան մասին: Իրանք քրիստոնեանները ևս ատելի են համակրութեամբ են վերաբերվում այդ նոր հարցին: Քրիստոնեաները առաւել են թիւրքերին, խորը համոզված են Թիւրքիայի քայքայման մէջ և նրանցից իւրաքանչիւր ազգութիւն, բացի հայերից, համվում են այս կամ այն պետութեան կողմը. հայերն էլ ձգտում են անկախութիւն ստանալ, ուրեմն իրանց արիւնով թիւրքիայի պաշտպանելը բոլորովին վնասակար է քրիստոնեայ ժողովուրդների բարոյական և կենսական շահերին:

Այդ վերանորոգութեան աջողութեանը ոչ ոք չէ հաւատում, այդ գործի վրա ամենքը նայում են ինչպէս գաւարի ֆրազների վրա, որոնցով Թիւրքիան կամենում է դրագեցնել արևմտեան Եւրոպային և նրանից փող ստանալ:

Բոլոր այդ առածների ճշմարտութիւնը հաստատվում է և նրանով, որ կառավարութիւնը այնպիսի հետաքրքրութեամբ է վերաբերվում դէպի այդ գլխաւոր վերանորոգութիւնը, որ կարծես նա բոլորովին բաղադրիչ չը լինի: Իւրաքանչիւր պետութեան գինուորական կազմակերպութեան մեքենան ատելի բաղադրիչ է լինում, երբ այդ պետութեան մէջ գանազան ազգութիւններ են ապրում և այդ ազգութիւններից կազմվում են զօրքերը: Թիւրքիայի գինուորական կազմակերպութեան մեքենան ատելի էլ ժեւար պէտք է լինի:

Բ. Դուբը գինուորական ծախսերի քչացնելը սրտով ցանկանում է, նա մի անգամ զօրքերին 48 ամիս ռոձիկ չը տուեց: Իր նպատակին հասնելու համար թիւրքաց կառավարութիւնը կամենում է զօրծող զօրքերի թիւը պակասեցնել: Այդ միջոցը մասամբ հասցնում է նպատակին: Ծախսերը մասամբ միայն կը պակասեն, որովհետև խնայած գումարի մասը հարկաւոր կը լինի ուժեղացած Ռէզիվի զօրքերի վրա ծախսելու:

ԻՏԱԼԻԱ

—

Հռոմից «Голосъ» լրագիրը ստացել է հետևեալ թղթակցութիւնը:

Այն կրիզիսը, որ սիրում էր թէ կառավարութեան, թէ ազգային ժողովի և թէ սենատի մէջ, վերջապէս վճռվեցաւ: Նա թէ վատ այնու ամենայնիւ վճռվեցաւ: Թագաւորը ինքը բաց արեց պարլամենտը, որի բացման ժամանակ ներկայ էր և Թագուհին: Քրեան և մից նոր սենատորներին նշանակելու հրամանը կարդացվում էր բոլոր փողոցներում:

Իտալիան վերջապէս հանգիստ չունէր քաշելու: Բայց այդ հանգստութիւնը երկար կը տևի թէ ոչ, ոչ ոքին յայտնի չէ: Պարլամենտական խառնակութիւնները, մինիստրների անհամաձայնութիւնը, ամենատհրաժեշտ վերանորոգութիւնների անցկացնելու անկարողութիւնը, չափազանց խրճոքել էին Իտալիայի ներքին գործերը: Պարլամենտի երկու թշնամական կուսակցութիւնների ներկայացուցչները, հանրապետական Կայրոլի և բռնապետ Դեպրետիս, որոնք երեք տարի շարունակ պատերազմում էին միմեանց հետ և մեծաւորապէս իւրաքանչիւր վեց ամիսներից յետոյ խլում էին միմեանցից մինիստրական պաշտօնը աշունքին միացան և մէկ մինիստրութիւն կազմեցին: Պարզ երևում է, որ խառնակութիւնը չափազանց էր և այն ահարկան, որի պատճառով հակառակորդները միացան, չափազանց նշանաւոր: Այդ առարկայի նշանաւորութիւնը ստիպեց հակառակորդներին միանալ: Այդ առարկան հարկերի և ուրիշ մի քանի հարցերի օրինքի վերաբերութիւնն էր:

Բայց իւղի և ջրի այդպիսի անակնկալ միութիւնը ցանկալի հետևանքներ չունեցաւ և մինիստրների գործերը առաջ չէին գնում: Մինիստրները ազգային ժողովի մէջ կարողանում էին մի բան անել, բայց նոքա անկարող էան սենատը համաձայնեցնել ազգային ժողովի հետ:

Իտալիան սահմանադրութեան յօդուածներից մէկը իրաւունք է տալիս թագաւորին սենատորներ նշանակել և այդ յօդուածը նշանակելի սենատորների թիւը չէ չափաւորում: Այդ դէպքում թագաւորը, ընտրելով սենատի անդամներին, ի նկատի է ունենում, թէ նոքա ինչքան կարող են օգնել առաջարկող մինիստրին այս կամ այն հարցը սենատի մէջ անցկացնելու համար: Երբ Հռոմում յայտնի եղաւ որ թագաւորը մտադիր է օգուտ քաղել յիշեալ իրաւունքից, բոլոր ազատամիտ տարրերը Իտալիայում վրդովվեցին: Ամենից առաջ վրդովված էին սենատի անդամները, որոնց պէտք է հետացնէր թագաւորը և նրանց տեղ նորերին նշանակէր և այդպիսով սենատի մեծամասնութիւնը պէտք է աննշան փորրամասնութիւն դարձնէր: Վրդովված էր սենատի այն կուսակցութիւնը, որ կարծում էր թէ իր անդամների թիւը կը պակասի, վրդովված էին այն մարդիկ, որոնք յոյս ունէին ժողովրդից ընտրվել:

Փոդովները բացանալուց առաջ ժողովուրդի մէջ լուր էր տարածվել, որ թագաւորը ներկայ չի գտնվի: Այդպիսի լուրերը միշտ վրդովում են հասարակութիւնը իւրաքանչիւր սահմանադրական պետութեան մէջ: Վերջապէս խօսում էին, որ թագաւորը մտադիր է 60 սենատորներ նշանակել: Ամեն բան հանգստացաւ, երբ թագաւորը ներկայացաւ պարլամենտը և մի կարճ ճառով նրան բաց արաւ: Վերջապէս յայտնի եղաւ, որ ենթադրված 60 սենատորների տեղ, թագաւորը միայն 26 է նշանակել: Թագաւորի ճառը ոգևորութեամբ ընդունվեցաւ:

Նոր նշանակված սենատորների մասին այսքան միայն յայտնի է, որ նոքա կառավարութեան իւրաքանչիւր առաջարկութիւնը կը պաշտպանեն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 փետրվարի: «Правит. Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ ժանդարմների չէֆ գեներալ Դրենտելն իր խնդրի համեմատ արձակված է իր պաշտօնից և նշանակված է Պետական Խորհուրդի անդամ, Մեծով գեներալ-ադիւտանտի կոչման մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 փետրվարի: Պետական բանկի 5% առժամեայ առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր.: Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 224 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 89⅜ ր., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր., ռոձիկ 7 ր. 77 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա 25³/₁₆ պէնս, ռուսաց 100 րուբլ Բերմանիայի վրա 127 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 265 ֆր. 25 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի: Երէկ Ս. Պետերբուրգից էգիպտոսի դաւթին տանող երկաթուղու գնացքը 390-դ վերստի վրա դիպաւ ապրանքի գնացքին: Երկու վագոններ կոտրված են: Մարդկերանցը տարաբաղդութիւն չէ պատահել:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

—Ստեփանիկ, ես տեսնում եմ, դու անասունները սիրում ես, դրա համար ես կուզարկեմ քեզ իմ նորահաս քուռակներից մէկը:

—Ձիաներ չեմ սիրում:

—Ապա ինչ ես սիրում:

—Ահա այսպիսի այծեամներ, եղջերուներ, կաքաւներ եմ սիրում:

—Շատ լաւ, դրանից յետոյ իմ որսերից որն կենդանի մնացած կը լինի, քեզ համար կուզարկեմ:

Ծառաները իմացում տուին, թէ ձիաները պատրաստ են:

Բէկը նեղհակալութիւն յայտնելով տանուտէրին, դուրս եկաւ նրա տնից. դրան առջև կանգնացրել էին գեղեցիկ նժոյգը: Ինքը ծերունի խաչօն ձիու սպանդակը բռնելով, նստեցրեց բէկին: Դա պատուի մեծ նշան էր, որով տանուտէրը ցոյց էր տալիս իր ծառայութիւնը դէպի պատուելի հիւրը: Նստելով ձիու վրա, քուրդ ցեղապետը չարժեց ձեռքի երկայն նիզակը, խաղացրեց ձին, և մեծ բազով սանելով տանուտէրին, հեռացաւ: Ծերունին երկար անշարժ կանգնած, նրա ետևից նայում էր: Նա տեսաւ, թէ որպէս բէկը իր ձին կրկին թագրեց խրամից, արհամարհելով կամուրջը, որի վրայից անց էին կենում, նրա կարծիքով, թոյլ և անգոր արարածները միայն: Նա տեսաւ, թէ որպէս հետամուտ եղաւ նա թիվերի միջից յայտնվող նապաստակին, և արձուի արագութեամբ նրա ետևից հասնելով, ցցեց նիզակը խեղճ անասունի կողքին: Այդ բոլորը տեսնում էր նա, մի և նոյն ժամանակ նրա գլխում անց էին կենում այսպիսի մտածութիւններ. «Ինչու այսպէս է երկրի և երկնքի գործասանքը. քուրդը հաց չունի ուտելու, հայը վարում է, ցանում է և նրա համար պարտ է պատրաստում.... քուրդը գեղեցիկ նժոյգ ընծայ է ընտանում, նստում է, զուարճանում է, գեղինը դաղջնում է իր ոտների տակ, իսկ հայն է տալիս նրա փողը.... հայը, որ բացի աւանակից մի ուրիշ անասնի վրա նստելու իրաւունք չունի...

(Կը շարունակվի)